ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՈՐ Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Սիրելի Սրբազան, բերկրանօք սրտի Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշատ սպասաւորիդ:

Շուրջ երեք տասնամեակներ առաջ, Աստուծոյ սպասաւորը լինելու կոչումը Ձեր սրտում, Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ մուտք գործեցիք Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանի նուիրական յարկից ներս: Ձեր հոգեւոր ուսումնառութիւնն ամբողջացնելով՝ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ անձնուէր ծառայանուիրումի ուխտ կնքեցիք եւ ստանձնեցիք կուսակրօն քահանայի պատասխանատու առաքելութիւնը հաւատաւոր մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքում:

Գնահատանքով ենք անդրադառնում Տէրունապատուէր Ձեր ծառայութեան արդիւնքներին: Դուք նախանձախնդիր ու նուիրեալ ոգով էք արգասաւորել Ձեր սպասաւորութիւնը Ճեմարանի փոխտեսչի, այնուհետ Ուկրաինայի եւ ապա Մեծ Բրիտանիայի Հայոց թեմերի առաջնորդի պատասխանատու պաշտօններում:

Ուրախ ենք, որ այսօր Դուք, որպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի տնօրէն, զովարժան աշխատանք էք իրականացնում հոգեւոր-աստուածաբանական գրականութեան հրատարակութեան կարեւոր գործում՝ ներդրում բերելով Տիրոջ կենարար խօսքի տարածման եւ մեր հաւատացեալների կրօնական գիտելիքների զօրացման առաքելութեան մեջ:

Սիրելի Սրբազան,

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աջով պահի ու պահպանի Ձեզ, զօրակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ շնորհելով քաջառողջութիւն ու արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Ո՛ղջ լեռուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 16-ն Մայիսի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 669